

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՍԱՍ ԶԱԼԲԵԳԻ ԴԱՐԵՍԹԱՆԻ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը. 00. 03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գլխավոր աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Բայադյան Աշոտ Հակոբի

տնտեսագիտության թեկնածու
Առաքելյան Կարապետ Հովհաննեսի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 10-ին,
ժամը 14⁰⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գոր-
ծող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սևիմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 10-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ա. Լ. Ապանյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Բանկային համակարգը ցանկացած երկրի տնտեսության կարևորագույն բաղադրիչներից է: Չնայած հասարակության տնտեսական զարգացման հիմնարար շարժիչ ուժերը գտնվում են բանկային համակարգից դուրս, երկրում գործող բանկերի վիճակը կարող է զգալիորեն արագացնել կամ դանդաղեցնել տնտեսական զարգացումը: Բանկային համակարգը կարելի է բնութագրել որպես տնտեսական, քաղաքական իրավիճակի փոփոխության պայմաններում ինքնակարգավորվող համակարգ, որը մշտապես գտնվում է շարժման մեջ: Ժամանակակից առևտրային բանկը դա կազմակերպություն է, որը ստեղծված է դրամական միջոցների ներգրավման և դրանց բանկերի անունից վերադարձելիության, վճարելիության ու ժամկետայնության պայմաններով տեղաբաշխման համար:

Ներկա դրությամբ բոլոր երկրներում բանկերն իրենցից ներկայացնում են տնտեսության հզոր հատված, որի համար բնորոշ է կապիտալի կենտրոնացման բարձր աստիճանը, ուժեղ մրցակցությունը, գործունեության աճող բազմազանեցումը: Հարկ է նշել, որ բանկերը շուկայական կառույցների համակարգի կենտրոնական հատվածներից մեկն են: Դրանց գործունեության զարգացումը անհրաժեշտ պայման է շուկայական մեխանիզմի ձևավորման և զարգացման համար: Բանկերն ապահովում են տնտեսության շարունակական զարգացումը և տնտեսական աճի անհրաժեշտ տեմպերի ապահովումը:

Բանկերի դերը տնտեսության մեջ առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ դրանք հանդիսանում են ֆինանսական միջևորդներ, իրականացնում են ֆինանսական կապիտալի մատակարարների և սպառողների համար միջևորդական գործառույթ: Բանկերը կատարում են վերը նշված երկու խմբերի միջև միջևորդության կարևոր գործառույթ՝ հավաքագրելով հասարակության լայն զանգվածների խնայողությունները և դրանք տրամադրելով վախառուններին: Բանկերը նաև մանր և հաճախ կարճաժամկետ ավանդները վերափոխում են ավելի խոշոր և երկարաժամկետ վարկերի՝ դրանով իսկ արագացնելով և ավելի արդյունավետ դարձնելով տնտեսության մեջ ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման գործընթացը:

Ժամանակակից բանկային համակարգում բանկերը առաջ են անցել միջևորդի ավանդական պարտականություններից և սկսել են առաջարկել այլ տեսակի ծառայություններ մուտք գործելով ֆինանսական ծառայությունների բնագավառ: Ժամանակակից բանկային համակարգում կարելի է հանդիպել բազմաթիվ մասնագիտացված բանկերի, որոնք կենտրոնացած են որոշակի նպատակային շուկաներում: Ժամանակակից ունիվերսալ բանկերը առաջարկում են ծառայությունների լայն շրջանակ, որոնց շարքում են ավանդային հաշիվների վարումը, տարբեր տեսակի վարկերի տրամադրումը, հողի և անշարժ գույքի հետ կապված ծառայությունները, կյանքի ապահովագրությունը և այլն:

Իսլամական շատ երկրների բանկային համակարգերում կիրառվում են

Իսլամի սկզբունքները: Այդ երկրներից են Իրանը, Մալայզիան, Պակիստանը և Սաուդյան Արաբիան: Իրանը և Պակիստանը միակ երկրներն են, որոնք ամբողջովին ընդունում են այդ համակարգը: Ղուրանը արգելում է ռեբանե, այսինքն՝ չի ընդունում տոկոսադրույթի գաղափարը: Դրա իմաստն այն է, որ փողը չի կարող ապրանք համարվել և պետք է օգտագործվի միայն արտադրության մեջ: Այդ պատճառով իսլամական բանկային համակարգի եզակի յուրահատկությունն այն է, որ ավանդները և վարկերը չունեն ֆիքսված տոկոսադրույթ: Իսլամական բանկային համակարգում բանկերի գործառնությունների 80-95%-ը կարճաժամկետ վարկերի տրամադրումն է:

Վարկերի տեղաբաշխման բարձր դիսկալնությունը ստիպում է բանկերին վարկեր տրամադրել միայն կայուն և բարձր վարկունակություն ունեցող վարկառուներին: Բանկերը Իրանում ազգայնացվեցին 1979թ-ի հեղափոխությունից հետո և 1983թ ՝առանց ռեբայիե բանկային համակարգի մասին օրենքը սահմանափակեց տեղական բանկային գործունեությունը: Ավանդների և վարկերի տոկոսադրույթները սահմանվում են Դրամական միջոցների և վարկային խորհրդի կողմից: Բացի այդ, 1980-ականների սկզբից որոշ իսլամական բանկեր փորձեցին գործունեություն ծավալել գլոբալ շուկաներում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ մուսուլմանության աշխարհագրական սահմաններից և տարբերակով սեփական ակտիվների կառուցվածքը: Նույն ժամանակահատվածում որոշ արևմտյան ինստիտուտներ մուտք գործեցին իսլամական բանկային համակարգ: Ներկայումս աշխարհում գոյություն ունեն ավելի քան 150 իսլամական բանկեր, իսկ իսլամական բանկային համակարգը սկսել է գործունեություն ծավալել Կենտրոնական Ասիայում և Արևելյան Եվրոպայում:

Իսլամական բանկային համակարգն, այսպիսով, իր կանոններն է թելադրում տնտեսական քաղաքականություն մշակողներին: Բնականաբար, շատ գործիքներ և մեթոդներ, որոնք իրենց արդյունավետությունն է ցույց տվել ավանդական բանկային համակարգերում, նույնպիսի հաջողությամբ չեն կարող կիրառվել իսլամական, այդ թվում նաև իրանական բանկային համակարգում: Հետևաբար արդիական են դառնում այն հետազոտությունները, որոնք ուղղված են միջազգային լավագույն փորձի և իսլամական բանկային համակարգի սինթեզի ստեղծմանը, ինչն է պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Իրանի Իսլամական Հանրապետությունում բանկային համակարգի զարգացման և արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումն է: Նշված նպատակի իրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բանկերի և բանկային ծառայությունների վերաբերյալ ժամանակակից տեսագործնական պատկերացումները,
- ուսումնասիրել տարբեր երկրներում ձևավորված բանկային համակարգերի

առանձնահատկությունները

- բացահայտել ավանդական և իսլամական բանկային համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները,
- ուսումնասիրել Իրանի Իսլամական Հանրապետությունում բանկային հարաբերությունների ձևավորման նախադրյալներն ու պատմական զարգացման առանձնահատկությունները
- ուսումնասիրել Իրանի խոշորագույն բանկերի պատմությունը և ֆինանսական ցուցանիշները,
- ուսումնասիրել աշխարհի տարբեր մայրցամաքները ներկայացնող խոշորագույն բանկերի պատմությունը և ֆինանսական ցուցանիշները,
- հաշվարկել և համեմատական վերլուծության ենթարկել Իրանի և արտասահմանյան խոշորագույն բանկերի ֆինանսական վիճակը և արդյունավետությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշները վեր հանելով դրանց հիմքում ընկած կարևորագույն գործոնները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Իրանի Իսլամական Հանրապետության բանկային համակարգն է, իսկ առարկան այն հիմնախնդիրներն են, որոնք հանգեցնում են բանկային համակարգի արդյունավետության նվազմանը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել, իրանական, հայ և այլ հեղինակների՝ բանկերի և բանկային հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրություններն ու հրապարակումները, Իրանի և միջազգային նորմատիվ ու իրավական ակտերը, Իրանի և այլ պետությունների վիճակագրական ծառայությունների, Կենտրոնական բանկերի և այլ գերատեսչությունների հրապարակած հաշվետվությունները, և այլ փաստաթղթեր: Հետազոտության մեթոդաբանական հիմք են ծառայել համակարգային, կառուցվածքային, իրավիճակային և էկոնոմետրիկ վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը հետևյալներն են.

- Բացահայտվել են Իրանի բանկային համակարգում առկա հիմնախնդիրների պատճառները, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղում բանկային սոկոսադրույթի արհեստական կարգավորումը, վարկեր տրամադրելու պարտադրանքը, և այլն:
- Համեմատական վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ իրանական և արտասահմանյան բանկային համակարգերի զարգացումները շատ դեպքերում տրամաբանորեն հակառակն են:
- Ցույց է տրվել, որ տոկոսադրույթի արհեստական իջեցումը բացասաբար է ազդում ներդրումների վրա: Վերջինս պայմանավորված է ավանդների

ծավալի անկմամբ, վարկային ,սնե շուկայի առաջացմամբ և առանձին վարկերի տրամադրման պարտադրանքով և այլն:

- Մշակվել են իրանի բանկային համակարգի արդյունավետության բարձրացման առաջարկներ, որոնց շարքում են տոկոսադրույքների շուկայական մեխանիզմներով ձևավորումը, իրական տոկոսադրույքի դրական մակարդակի վրա սլահելը, վարկերի տրամադրման պարտադրանքի վերացումը, ֆինանսական միջոցների ներգրավման համար միջոցառումների մշակումը և այլն:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Աշխատանքում ներկայացված լուծումները կարող են կիրառվել Իրանում և համանման խնդիրներ ունեցող այլ երկրներում բանկային համակարգի կատարելագործմանն ուղղված ծրագրերի մշակման, օրենսդրական բարեփոխումների, ընթացակարգերի կատարելագործման աշխատանքներում:

Ատենախոսության տեսական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել ևս ոլորտի վերաբերյալ հետազոտություններով զբաղվող հետազոտողների և դասախոսների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մ.Քոթայանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Հեղինակի կողմից հրապարակվել են 4 գիտական հոդվածներ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմված է 150 էջից՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը: Այն պարունակում է 24 աղյուսակ և 91 գծապատկեր:

ԱՏԵՆԱՌՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորվել է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, գործնական նշանակությունը, գիտական նորույթ հանդիսացող արդյունքները:

Ատենախոսության առաջին՝ *Բանկային համակարգերի տեղը ժամանակակից տնտեսական համակարգերում*¹ գլխում ներկայացվել են բանկային համակարգերի ժամանակակից տեսությունները և աշխարհում ձևավորված բանկային համակարգերի առանձնահատկությունները:

Գիտնականների մի մասի կարծիքով առաջին բանկերն առաջացել են 14-15-րդ դարերում, Իտալիայում: Գիտնականների մեկ այլ խումբ գտնում են, որ բանկը ծագել է ապրանքադրամային հարաբերությունների զարգացման փուլում, երբ ի հայտ է եկել դրամաշրջանառության կարգավորման, լայնածավալ վարկսույին գործառնությունների իրականացման անհրաժեշտություն¹: Ավանդական բանկային համակարգում բանկերը ավանդատուների և վարկառուների միջև հանդես են գալիս որպես միջնորդ՝ առաջարկելով ինչպես ավանդային, այնպես էլ վարկային ծառայություններ²:

Բանկը ֆինանսական շուկայի տրամաբանորեն սկզբնական, ելակետային օղակն է, որը մատուցում է ֆինանսական միջնորդության ծառայություններ: Ֆինանսական միջնորդությունը գործունեության այնպիսի տեսակ է, որը կապեր է ստեղծում երկու խմբերի վարկառուների և ավանդատուների միջև: Այս կերպ միջնորդը, ներգրավված ավանդները ուղեկով վարկերի տրամադրմանը, ապահովում է տնտեսական աճ, իսկ ավանդատուներին՝ շահույթ միևնույն ժամանակ նվազեցնելով ձեռնարկատիրական գործունեության ռիսկը:

Վերջին տարիներին բանկերի միջև մրցակցության սրումը բանկերին ստիպեց վերանայել իրենց կողմից տրամադրվող ծառայությունների տեսականին և որակը: Մա նշանակում է, որ ֆինանսական համակարգերը, բացի ավանդատուներից վարկառուներին դրամական միջոցների փոխանցման գործընթացի իրականացումը, այլ գործառույթներ էլ են իրականացնում³: Ժամանակակից բանկային համակարգում բանկերի գործառույթները կարելի է բաժանել 2 խմբի⁴: Բանկերի առաջնային գործառույթների շարքին են դասվում ավանդների ընդունումն ու ներդրումների վարկավորումը, դրանց հետ կապված այլ գործառնությունները: Բանկերի երկրորդային գործառույթների շարքին են

¹ Тавасиев А. М. Банковское дело. М., 2007. с. 357.

² <http://emkan-emeroz.blogfa.com/post-78.aspx>

³ Modern banking services in I.R.I and the world, ARSHADI ALI, chapter 1 page 6


⁴ Modern banking services in I.R.I and the World, ARSHADI ALI, monetary and banking research academy 2009 chapter 3 page 4

դասվում կառավարության և հաճախորդների համար գործակալի դեր կատարելը, հաճախորդի անունից պայմանագրեր կնքելը և բանակցելը, թողարկված արժեթղթերի կառավարման ստանձնումը, Երաշխիքների տրամադրումը, և այլն:

Վերջին տասնամյակներում փոխվել է նաև ֆինանսական հաստատությունների կառուցվածքը և կառավարման սկզբունքները: Ներկայումս հաճախորդները ավելի շատ հակված են այնպիսի հարաբերությունների ստեղծմանը, որն ուղեկցվում է տեխնոլոգիական փոփոխությունների ներառմամբ: Տեխնոլոգիական առաջընթացը կարող է օգնել հաճախորդների հետ հարաբերությունների ավելի բարենպաստ միջավայր ստեղծելու և ավելի մեծ շահույթ ստանալու գործում:

Շամանակակից բանկային համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ի վերջո հանգեցնում է վիրտուալ բանկային ծառայությունների համակարգի ձևավորմանը: Վիրտուալ բանկային համակարգը ընձեռում է հետևյալ հնարավորությունները.

- բանկի հաճախորդների ավելացում,
- բանկային ծառայությունների որակի բարձրացում,
- բանկի կողմից մատուցվող գործարքների սակագնի նվազեցում,
- հաճախորդների բավարարվածության մակարդակի աճ,
- հաճախորդների հանձնարարություններին արձագանքելու արագության աճ,
- անձնակազմի աշխատանքային պայմանների բարելավում,
- գործառնական ծախսերի կրճատում, և այլն:



Գծապատկեր 1: Վիրտուալ բանկի գործունեության սկզբունքները

Հարկ է նշել, որ առանձին երկրների բանկային համակարգերը տարբերվում են միմյանցից, քանի որ դրանք ձևավորվել են տարբեր պատմական ժամանակաշրջաններում, տարբեր ազգային առանձնահատկությունների ազդեցության ներքո և գործում են զարգացման տարբեր մակարդակ ունեցող տնտեսական տարածաշրջաններում: Կարելի է առանձնացնել սեփական ավանդույթներով հետևյալ տիպային բանկային համակարգերը⁵:

Բրիտանական բանկային համակարգ: 1980–ականներին Բրիտանիայի ֆինանսական համակարգում կարելի է նկատել կառուցվածքային փոփոխություններ և նորամուծություններ, որոնք հանգեցրին այնպիսի կառուցվածքի ձևավորման, որտեղ խզվում են ֆինանսական համակարգի տարբեր բաղադրիչների միջև եղած ավանդական սահմանագծերը: Նորամուծությունը ընդգրկում էր նոր ֆինանսական պայրանքներում նոր ֆինանսական գործիքների և գործառնությունների ի հայտ գալը:

ԱՄՆ բանկային համակարգ: Ամերիկյան բանկային համակարգում գոյություն ունի ավելի քան 27 հազ ավանդային ֆինանսական ինստիտուտներ: Առևտրային բանկերին են պատկանում բոլոր ակտիվների մոտ 76%–ը: Նահանգային օրենսդրությամբ պայմանավորված բազմաթիվ հաջողակ ռեզիդնալ բանկեր չէին կարողանում մասնաճյուղեր բացել այլ նահանգներում:

Ճապոնական բանկային համակարգ: Ճապոնական բանկային համակարգը ունի բազմաթիվ չլրկնվող յուրահատկություններ, որոնցից մեկը ֆինանսների նախարարության ու Ճապոնիայի վերահսկիչ բանկի առկայությունն է: Այս երկու հաստատությունները վերահսկում են տարբեր գործառնություններ, ինչպիսիք են նոր մասնաճյուղերի բացումը, աշխատանքային ժամերը, տրամադրվող վարկի ծավալը, տոկոսադրույթը և հաշիվների վարման կանոնները: Ճապոնական բանկերը շարժվում են միասնական կանոններով, երբ խոսքը վերաբերում է միջազգային առևտրում ներդրումներին և ֆինանսավորմանը, ինչպես նաև բազմազգ կազմակերպությունների հետ նախագծերի իրականացմանը⁶:

Եվրամիության բանկային համակարգ: Եվրամիությունում երկրներից շատերը ունեն 3–5 հայտնի բանկեր: Որոշ երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Իսպանիան, Իտալիան և Ֆրանսիան, տարածաշրջանային բանկերը ավելի մեծ կարևորություն ունեն, քանի որ կոոպերատիվ և համատեղ ֆոնդերի քանակը չափազանց մեծ է: Բացի այդ Եվրոպայում բազմաթիվ վարկային կազմակերպություններ կան, որոնք մասնազիտացած են որոշակի տեսակի վարկերի տրամադրման մեջ (օրինակ Իտալիան)⁷:

Զարգացող երկրների բանկային համակարգ: Զարգացող երկրներում առևտրային բանկերը առաջին ֆինանսական կազմակերպություններն են, որոնք մուտք են գործում տնտեսական գործընթացի փուլ: Բազմաթիվ զարգացող

⁵ Modern banking in theory and practice, Shelag Hefernan, 2003

⁶ Modern banking in theory and practice, Shelag Hefernan, 2003 page 150-153

⁷ Modern banking in theory and practice, Shelag Hefernan, 2003 page 155

երկրներում տնտեսական տարբեր ցուցանիշերի կարգավորումը հանգեցրեցին վարկային ազատ շուկաների զարգացմանը, որոնք կարևորագույն աղբյուր էին հանդիսանում անշարժ գույքի ձեռք բերման և շինարարության համար: Այդպիսի շուկաների աճը պայմանավորված էր ազատ շուկայի համեմատ պաշտոնական աղբյուրների ավելի ցածր տոկոսադրույքներով:

Արևելյան Եվրոպայի բանկային համակարգ: Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների բանկային մոդելը բաղկացած էր կենտրոնական բանկից և մի շարք հատուկ գործառնություններ իրականացնող բազմաթիվ բանկերից, որոնք վարկեր էին տրամադրում և բանկի դրամական միջոցների պահանջարկի բավարարման նպատակով ավանդներ էին ներգրավում: Վերջիններս ներգրավված էին նաև օտարերկրյա ֆինանսական գործառնություններում:

Իսլամական բանկային համակարգ: Իսլամական շատ երկրների բանկային համակարգերում կիրառվում են Իսլամի սկզբունքները: Այդ երկրներից են Իրանը, Մալայզիան, Պակիստանը և Մաուրյան Արաբիան: Իրանը և Պակիստանը միակ երկրներն են, որոնք ամբողջովին ընդունում են այդ համակարգը:

Ղուրանը արգելում է ,ռեբանե, այսինքն չի ընդունում տոկոսադրույքի գաղափարը, հետևաբար ցանկացած տոկոսադրույք դիտարկում է որպես ,ռեբանե: Դրա իմաստն այն է, որ փողը չի կարող ապրանք համարվել և պետք է օգտագործվի միայն արտադրության մեջ: Այդ պատճառով իսլամական բանկային համակարգի եզակի յուրահատկությունն այն է, որ ավանդներն և վարկերը չունեն ֆիքսված տոկոսադրույք⁸:

Ողջ աշխարհում ազգային բանկային համակարգերը աստիճանաբար ձգտում են դեպի բանկային ծառայությունների մատուցման ժամանակակից եղանակներին: Այն երկրների բանկային համակարգերը, որոնք չեն կմնան այդ միտումից, դուրս կմնան մրցակցությունից: Այս իմաստով Իրանի բանկային համակարգը նույնպես փորձում է համընթաց քայլել ժամանակակից բանկային տեխնոլոգիաների հետ, այնպես, որ կարողանա գոյատևել երրորդ հազարամյակում:

Ատեսախտության երկրորդ՝ **«Իրանական և օտարերկրյա բանկերի զարգացման նախադրյալները»** գլխում ներկայացվել են Իրանի բանկային համակարգի ձևավորման պատմական նախադրյալները, ինչպես նաև միջազգային բանկային համակարգը և խոշորագույն բանկերի ֆինանսական ցուցանիշերը:

Մինչ Իրանում ներկայիս ժամանակակից բանկային համակարգի ձևավորումը, բանկային գործառնություններն ընդամենը փողի փոխանակման գործընթաց էին: Առևտրի ու ձեռնարկատիրության զարգացմանը զուգընթաց

⁸ <http://www.sepahbank.ir> and Modern banking in theory and practice, SHELAG HEFERNAN, 2003 page 175-176

ավելի ու ավելի շատ մարդիկ սկսեցին ներգրավվել փողի փոխանակման գործընթացում այն դիտարկելով որպես առանձին գործունեության տեսակ:

Փողի փոխանակման գործընթացը շարունակվեց մինչև Նոր Արևելյան բանկի հիմնադրումը (1850թ): Բանկի հիմնադրման հետ մեկտեղ փողի փոխանակման գործընթացը դադարեցվեց: Նստ էության Նոր Արևելյան բանկը Իրանում հիմնադրված առաջին բանկային ինստիտուտն էր: Այն հիմք հանդիսացավ բանկային գործառնությունների ստեղծման համար: Այն բրիտանական բանկ էր, որի գլխամասը գտնվում էր Լոնդոնում: Բանկը հիմնադրեցին բրիտանացիները՝ առանց Իրանի կառավարությունից որևէ թույլտվություն ստանալու:

Բանկը մասնաճյուղեր բացեց Թավրիզում, Ռաշտում, Մաշադում, Իսֆահանում, Շիրազում և Բուշերում: Բնականաբար, այդ ժամանակ օտարերկրացիներն ազատորեն և առանց սահմանափակումների կարող էին ներգրավվել երկրի տնտեսական ու առևտրային գործընթացներում: Պատմության մեջ առաջին անգամ բանկը թույլատրեց անհատներին բացել հաշիվներ, ավանդի տեսքով գումար ներդնել բանկում և չեկեր տրամադրել:

1885թ–ին Իրանի կառավարության ու բարոն Հուվիտս դե Ռեյթերի միջև կնքվեց կոնցեսիոն համաձայնագիր, որի արդյունքում հիմնադրվեց Շահանշահի բանկը (Կայսերական բանկ): Այս բանկը գնեց Նոր Արևելյան բանկի ունեցվածքը և ակտիվները այդպիսով վերջ դնելով վերջինիս բանկային գործառնություններ իրականացնելու իրավունքին:

Շահանշահի բանկն իրականացում էր առևտրային գործարքներ, թողարկում էր թղթադրամներ: Միաժամանակ, այն Իրանում ու արտերկրում հանդես էր գալիս որպես Իրանի կառավարության գանձապետ: Բանկի իրավաբանական գլխամասը գտնվում էր Լոնդոնում և ենթարկվում էր Բրիտանական օրենքներին, սակայն բանկի գործունեությունը կենտրոնացած էր Թեհրանում: 1894թ–ին Շահանշահի բանկից թղթադրամների էմիսիայի իրավունքը գնվեց 200 000 ֆունտով և տրամադրվեց Իրանի Մելլի բանկին:

1925թ–ին առաջին անգամ հիմնադրվեց իրանական կապիտալ ունեցող Փահլավի Քոշուն բանկը, որի նպատակը ուժային կառույցների անձնակազմի ֆինանսական հարցերով զբաղվելն ու կենսաթոշակային ֆոնդի ստեղծումն էր: Բանկի կապիտալը կազմում էր 388.395 թուման (մոտ 3.88մլն ռեալ): Իրանի կարևոր քաղաքներում մասնաճյուղեր բացելով՝ բանկը սկսեց այնպիսի ֆինանսական գործառնություններ իրականացնել, ինչպիսիք են ընթացիկ հաշիվների բացումը և Իրանի սարածքում դրամական փոխանցումների իրականացումը:

1928թ–ին հիմնադրվեց Իրանի Կենտրոնական բանկը, որի գործառույթների շրջանակը ընդգրկում էին առևտրային գործառնությունները, կառավարության գանձապետի պարտականությունները, թղթադրամների էմիսիան, դրամավարկային ու ֆինանսական քաղաքականության իրականացումը և այլն: Կենտրոնական բանկի պարտականություններն էին կառավարության անունից

գործարքների իրականացումը, առևտրային բանկերի վերահսկողությունը, փողի առաջարկի կարգավորումը, արտարժույթի ծավալների կարգավորումը և այլն:

1979թ-ի հունիսին իրանական բանկերն ազգայնացվեցին և Իսլամական բանկային օրենքի ընդունմամբ բանկի գործունեությունը կարգավորող նորմատիվները փոխվեցին: Արդյունքում սահմանափակվեցին ու խստացվեցին բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակը (առևտրային գործարքներում մասնակցությունը, ավանդների ընդունումը, հաճախորդներին ծառայությունների մատուցումը, վարկերի տրամադրումը)⁹:

Իրանի մինչեղափոխական բանկային համակարգում գերիշխում էին արևմտյան մոդելները: Մինչև 1979թ-ը Իրանում գործում էին 36 բանկեր, որոնց մեծ մասը ստեղծվել էին միջազգային կապիտալով: Իսլամական հեղափոխությունից հետո բանկային սպանդերի մեծ մասը տեղափոխվեց արտերկրի և բավականին մեծ դժվարություններ առաջացան փոխառու միջոցների հավաքագրման հետ, ինչի հետևանքով բանկերը հայտնվեցին շատ բարդ ու ոչսկային իրավիճակում: Հենց բանկային համակարգի վերջնական ու հիմնովին կործանումից խուսափելու համար բոլոր բանկերն ազգայնացվեցին:

Ազգայնացված բանկերի համար անհրաժեշտություն առաջացավ մշակել արդյունավետ կառավարման համակարգ, որի միջոցով հնարավոր կլիներ ստեղծել իսլամական բանկային օրենքներից հարմարեցված ծառայությունների, վարկերի տրամադրման գործընթացի միասնական համակարգ, ինչպես նաև միասնական քաղաքականություն կիրառել մյուս կարևոր տնտեսական, ֆինանսական և դրամավարկային ոլորտներում: Այդ ամենի արդյունքում նորաստեղծ ազգային բանկերը խմբավորվեցին 2 խմբերում: Արդյունքում 1980-ականների սկզբներում 36 բանկերը միավորվեցին ընդամենը 9 բանկերում, որոնցից 6-ը առևտրային, իսկ 3-ը մասնագիտացված բանկեր:

Ներկայումս Իրանի բանկային համակարգում գերիշխում են 7 պետական ինստիտուտներ՝ 4 առևտրային բանկեր և 3 մասնագիտացված բանկեր, որոնց բաժին է ընկնում Իրանի բանկային համակարգի 85%-ը: Բացի այդ գոյություն ունեն նաև 17 մասնավոր բանկեր, 8 մասնավոր վարկային կազմակերպություններ, վարկային գործընկերություններ և ազատ գոտիներում գործող օտարերկրյա բանկերի 3 մասնաճյուղեր: Իրանի բանկային համակարգի առաջնահերթ խնդիրներից է դրա մասնավորեցումը և արդիականացումը: Իրանի խոշորագույն բանկերն են Մելլի բանկը, Սադերաթ բանկը, Թեջարաթ բանկը, Մեպահ բանկը և Մելլաթ բանկը:

Առանձին երկրների բանկային համակարգերը տարբերվում են միմյանցից: Բնականաբար տարբեր է աշխարհի տարբեր մայրցամաքներում գործող բանկերի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշերի առանձնահատկությունը: Հետազոտությունում ներկայացվել է աշխարհի տարբեր ռեգիոններում գործող առավել մեծ հաջողության հասած բանկերից 5-ի

⁹ http://www.iranchamber.com/history/articles/banking_history.php

ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տվել վերլուծական համեմատությամբ բացահայտել Իրանում առկա հիմնախնդիրները: Մասնավորապես, ուսումնասիրվել են Տոկիո բանկի, Կոմբեք բանկի, Չինաստանի առևտրի և արդյունաբերության բանկի, Սիթի բանկի, և Լոյդս բանկային խմբի առանձնահատկությունները և ֆինանսական ցուցանիշերը:

Չետագոտության տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող ֆինանսատնտեսական ցուցանիշներն են.

1. Շահութաբերության ցուցանիշեր՝

$$1.1 \text{ Ակտիվների շահութաբերություն} = \frac{\text{Զուտ շահույթ}}{\text{Ընդհանուր ակտիվներ}} \times 100\%$$

$$1.2 \text{ Կապիտալի շահութաբերություն} = \frac{\text{Զուտ շահույթ}}{\text{Կապիտալ}} \times 100\%$$

Ակտիվների շահութաբերության մեծությունը, ընդունված չափորոշիչների համաձայն, պետք է մեծ լինի 1%-ից, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշը 15%-ից:

2. Գործառնական արդյունավետության ցուցանիշեր

$$2.1 \text{ Վարկերի գուտ տոկոսային եկամտաբերություն} = \frac{\text{Տոկոսային եկամուտներ - Տոկոսային ծախսեր}}{\text{Համախառն վարկեր}} \times 100\%$$

Վարկերի գուտ տոկոսային եկամտաբերության ցուցանիշը, ընդունված չափորոշիչների համաձայն, պետք է մեծ լինի 1.25%-ից:

$$2.2 \text{ Ակտիվների գուտ տոկոսային եկամտաբերություն} = \frac{\text{Տոկոսային եկամուտներ - Տոկոսային ծախսեր}}{\text{Ընդհանուր ակտիվներ}} \times 100\%$$

Ակտիվների գուտ տոկոսային եկամտաբերության ցուցանիշը, ընդունված չափորոշիչների համաձայն, պետք է մեծ լինի 4.5%-ից:

$$2.3 \text{ Ակտիվների գործառնական եկամտաբերություն} = \frac{\text{Գործառնական եկամուտ}}{\text{Ընդհանուր ակտիվներ}} \times 100\%$$

Ակտիվների գործառնական եկամտաբերության ցուցանիշը, ընդունված չափորոշիչների համաձայն, պետք է մեծ լինի 1%-ից:

$$2.4 \text{ Ակտիվների ընդհանուր եկամտաբերություն} = \frac{\text{Տոկոսային եկամուտ + Այլ գործառնական եկամուտ}}{\text{Ընդհանուր ակտիվներ}} \times 100\%$$

Ակտիվների ընդհանուր եկամտաբերության ցուցանիշը, ընդունված չափորոշիչների համաձայն, պետք է մեծ լինի 6.5%–ից:

3. Տոկոսային ցուցանիշեր

3.1 Վարկերի եկամտաբերություն = $\frac{\text{Տոկոսային եկամուտ}}{\text{Համախառն վարկեր}} \times 100\%$
Այս ցուցանիշի համընդհանուր ընդունելի մեծություն գոյություն չունի:

3.2 Ավանդների ծախսատարություն = $\frac{\text{Ավանդների տոկոսային ծախսեր}}{\text{Հաճախորդների ավանդներ}} \times 100\%$
Այս ցուցանիշի համընդհանուր ընդունելի մեծություն գոյություն չունի:

4. Վարկային ցուցանիշեր

4.1 Անհուսալի վարկերի մասնաբաժին = $\frac{\text{Անհուսալի վարկեր}}{\text{Համախառն վարկեր}} \times 100\%$
Լավագույն դեպքում ցուցանիշի մեծությունը պետք է հավասարվի գրոյական տոկոս մասնաբաժնի, ինչը կբնութագրի բանկի վարկային պորտֆելի առավելագույն որակը:


4.2 Վարկեր/ավանդներ հարաբերություն = $\frac{\text{Համախառն վարկեր}}{\text{Հաճախորդների ավանդներ}} \times 100\%$
Ըստ Բազելի նորմատիվների՝ համախառն վարկեր/ընդհանուր ավանդներ հարաբերակցության ցուցանիշը պետք է լինի 70-80% սահմաններում:

5. Անձնակազմի արդյունավետության ցուցանիշ

5.1 Անձնակազմի ծախսատարություն = $\frac{\text{Զուտ շահույթ}}{\text{Անձնակազմի ծախսեր}} \times 100\%$
Ցուցանիշի բարձր արժեքը վկայում է, որ անձնակազմի իր վրա դրած պարտականություններն իրականացնում է բարձր մակարդակով, ինչպես նաև ցածր աշխատավարձերի մասին, իսկ ցածր ցուցանիշը ուռճացված աշխատակազմի և կառավարման արդյունավետության ցածր մակարդակի մասին:


Ատենախոսության երրորդ՝ *Իրանի բանկային համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները* գլխում տրվել է Իրանական և արտասահմանյան բանկերի ֆինանսական արդյունավետության գնահատականը, կատարվել է Իրանական և օտարերկրյա բանկերի ֆինանսական ցուցանիշերի համեմատական վերլուծություն:

Իրանական և օտարերկրյա բանկերի ֆինանսատնտեսական ցուցանիշերի հաշվարկի արդյունքները ներկայացված են զծապատկերների տեսքով:



Գծապատկեր 2: Իրանական և օտարերկրյա բանկերի ակտիվների շահութաբերության դինամիկան 2003-2009թթ.


Ակտիվների շահութաբերության ցուցանիշները ցույց են տալիս օտարերկրյա բանկերի և իրանական բանկերի կառավարման արդյունավետությունը: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ 2003-2005թթ և 2008-2010թթ-երին իրավիճակն առավել բարենպաստ էր իրանական բանկերի համար, այնինչ այս ժամանակաշրջանից դուրս իրավիճակն առավել նպաստավոր էր օտարերկրյա բանկերի համար: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2006-2007թթ. Իրանի դրամավարկային քաղաքականությունն էսպես տարբերվում էր նախորդ ժամանակաշրջանի դրամավարկային քաղաքականությունից: 2008-2010թթ-երի տարբերությունը բացատրվում է Եվրոպայում ու ԱՄՆ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի ի հայտ գալու հսկումաներով:



Գծապատկեր 3: Իրանական և օտարերկրյա բանկերի կապիտալի շահութաբերության դինամիկան 2003-2009թթ.


Գծապատկերը ցույց է տալիս բանկի կապիտալի շահութաբերությունը, սակայն բանի որ Իրանում պետությունը խստորեն սահմանում և վերահսկում է այս ցուցանիշը այն չի պատկերում Իրանում կապիտալի շահութաբերության իրական վիճակը: 2005-2007թթ և 2008-2010թթ ժամանակաշրջանների

իրանական ու օտարերկրյա բանկերի միջև այդչափ մեծ տարբերությունը կարելի է բացատրել դրամավարկային քաղաքականության փոփոխությամբ ու եվրոպայի ու ԱՄՆ-ի ձգնաժամային իրավիճակով: 2003-2004թթ-երին Իրանի բանկային համակարգի իրավիճակը բացատրելու համար կարելի է նշել համապատասխան բարենպաստ բանկային օրենսդրության առկայությունն ու խելամիտ դրամավարկային քաղաքականությունը: Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ օտարերկրյա բանկերը բավականին զգայուն են ցանկացած տնտեսական ֆեռոմենի նկատմամբ:




Գծապատկեր 5: Իրանական և օտարերկրյա բանկերի վարկերի գուտ տոկոսային եկամտաբերության դինամիկան 2003-2009թթ.

Այս գծապատկերը ցույց է, որ 2005թ-ից սկսած օտարերկրյա բանկերի տոկոսային շահույթը ավելի մեծ է եղել, քան իրանական բանկերինը: Դրա հիմնական պատճառն այն է, որ Իրանում տոկոսադրույթը սահմանվում է վերահսկիչ մարմնի կողմից և իրանական բանկերը չեն կարողանում ձկուն տոկոսադրույթային քաղաքականություն վարել: Այնինչ օտարերկրյա բանկերը ամբողջովին ձկուն են ու զգայուն են ցանկացած տնտեսական փոփոխության նկատմամբ:




Գծապատկեր 6: Իրանական և օտարերկրյա բանկերի ակտիվների գուտ տոկոսային եկամտաբերության դինամիկան 2003-2009թթ.

Այս գծապատկերը ցույց է տալիս, որ 2003թ-ին թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա բանկերը ունեցել են ակտիվների գուտ տոկոսային եկամտաբերության նմանատիպ արդյունքներ: Մակայն հետագա տարիներին դրանց միջև աստիճանաբար առաջացել է ձեռքբաված, քանի որ Իրանական բանկերն ավելի շատ գուտ տոկոսային եկամուտ են ստացել քան օտարերկրյա բանկերը: Մյուս կողմից օտարերկրյա բանկերում տոկոսադրույքը կախված է տնտեսական ու մրցակցային իրավիճակից, այնինչ Իրանում նման օրենքներ չեն գործում:



Գծապատկեր 7: Իրանական և օտարերկրյա բանկերի ակտիվների գործառնական եկամտաբերության դինամիկան 2003-2009թթ.


Այս գծապատկերը ցույց է տալիս, որ մինչև 2007թ-ը թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա բանկերը ունեցել են միևնույն ցուցանիշները: Մակայն 2008թ-ից հետո առաջացել է ձեռքբաված, որը հիմնականում պայմանավորված է իրանական բանկերում սպեկուլյատիվ գործընթացների ակտիվացմամբ և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նկատմամբ իրանական բանկերի ավելի փոքր զգայունությամբ:



Գծապատկեր 8: Իրանական և օտարերկրյա բանկերի վարկերի եկամտաբերության դինամիկան 2003-2009թթ.


Այս գծապատկերը ցույց է տալիս, որ Իրանի բանկերի համախառն վարկերից ստացվող տոկոսային եկամտի ցուցանիշը միշտ գերազանցել է

օտարերկրյա բանկերի ցուցանիշը: Դրա պատճառն այն է, որ իրանական բանկային համակարգը հիմնված է ավանդական բանկային համակարգի վրա, որտեղ եկամտի մեծ մասը գոյանում է վարկային ու ավանդային գործառնություններից: Օտարերկրյա բանկերում այլ տնտեսական գործառնություններից կամ ուղիներից ստացվող եկամուտների դերը ավելի մեծ է:




Գծապատկեր 9: Իրանական և օտարերկրյա բանկերի անհուսալի վարկերի մասնաբաժնի դինամիկան 2003-2009թթ.

Այս գծապատկերը ցույց է տալիս, որ 2004-2010թթ-երին իրանական բանկերի անհուսալի վարկերի մասնաբաժնի գերազանցում էր օտարերկրյա բանկերի ցուցանիշը, ինչը պայմանավորված էր Իրանում պարտադրված տոկոսադրույթի առկայությամբ, ինչպես նաև այլ շուկաներից վարկերի ներգրավմամբ և պաշտոնական ու ազատ շուկայի տոկոսադրույթների միջև տարբերությամբ (24%): Պաշտոնական և ոչ պաշտոնական վարկային շուկաներում տոկոսադրույթների տարբերությամբ պայմանավորված վարկատուները չեն ցանկանում ետ վերադարձնել պաշտոնական աղբյուրներից ստացած իրենց վարկերը, քանի որ հետագայում դրամական միջոցների պահանջարկի դեպքում ստիպված են լինելու շատ ավելի բարձր տոկոսադրույթներով վարկեր վերցնել ոչ պաշտոնական աղբյուրներից:



Գծապատկեր 10: Իրանական և օտարերկրյա բանկերի վարկեր/ավանդներ հարաբերության դինամիկան 2003-2009թթ.

Այս գծապատկերը ևույնպես ցույց է տալիս, որ իրանական բանկերի վարկեր/ավանդներ հարաբերության ցուցանիշը միշտ բարձր են եղել Բազելյան ստանդարտից (70-80%): Դրա պատճառը վարկերի պարտադրաբար տրամադրումն է և պարտադրված տոկոսադրույքը, ինչպես նաև առավել մատչելի վարկեր ձեռք բերելու մարդկանց հակումը:



Գծապատկեր 11: Իրանական և օտարերկրյա բանկերի անձնակազմի ծախսատարության դիսանիկան 2003-2009թթ.

Ընդհանուր առմամբ օտարերկրյա բանկերում անձնակազմի ծախսատարության ցուցանիշը գերազանցել է իրանական բանկերի ցուցանիշին: Դրա հիմնական պատճառն այն է, որ իրանական բանկերը բավականաչափ ճկուն չեն ճգնաժամային իրավիճակներում: Բացի այդ որոշակի սահմանափակումներ են մտցվում անձնակազմի ծախսերի հաշվեկշռում, այնինչ օտարերկրյա բանկերում նման կանոն գոյություն չունի և բանկը կարող է ինքնուրույն կառավարել իր ծախսերը, հատկապես անձնակազմի ծախսերը:

Վիճակագրական տվյալները և հետազոտությունները ցույց են տալիս, որ տոկոսադրույքի նվազեցումը բացասական ազդեցություն է թողնում բանկային ավանդների վրա: Կենտրոնական բանկի հրապարակած վիճակագրության համաձայն 2009թ.-ին 2008թ. համեմատությամբ արձանագրվել է ոչ պետական ավանդների 24.1% աճ, այն դեպքում, երբ 2010թ.-ին արձանագրվել է 2009թ. նույն ցուցանիշի համեմատությամբ 17% անկում: Նմանապես՝ արձանագրվել է նաև երկարաժամկետ ավանդների մասնաբաժնի նվազում 27.5 %-ից մինչև 17%¹⁰: Նման վիճակագրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Իրանի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում բանկային տոկոսադրույքի հարկադիր իջեցումը հանգեցրել է ներդրումների համար հասանելի ֆինանսական միջոցների կրճատման: Իհարկե, տոկոսադրույքի նվազեցումը միակ գործոնը չէ, որ նպաստել է ներդրումների ծավալի նվազմանը: Դրա վրա ազդող գործոններն են տնտեսական աճի ցուցանիշը, բանկային

¹⁰ Donyaye eghtesad, no. 24qs, year q – Monday 31/1/2010 page 28

տոկոսադրույքը, ինֆլյացիայի մակարդակը, ֆինանսական աղբյուրները, ռիսկը և անորոշությունը, ամորտիզացիան, անցյալ ժամանակաշրջանում բաժնետիրական կապիտալի մեծությունը, կապիտալի կառավարման ծախսերը և այլն: Մասնագիտական գրականությունում տնտեսության ֆինանսական աղբյուրների (միջոցների) գումարը հավասար է հասարակության ավանդների գումարին:

Տոկոսադրույքի ստիպողաբար կամ արհեստական իջեցման դեպքում կարելի է կանխատեսել 2 սցենար: Առաջին դեպքում միջոցների դեֆիցիտի ծածկման համար կառավարությունը փող է ներարկում բանկերին, որն էլ իր հերթին հանգեցնում է փողի գանգվածի ու ինֆլյացիայի աճի (դրան հաջորդող բոլոր հետևանքներով): Բացի փողի գանգվածի հնարավոր աճը, բանկային տոկոսադրույքի և ազատ շուկայի տոկոսադրույքի տարբերության շնորհիվ վարկառուները ստանում են զգալի օգուտներ: Այդ պատճառով է բանկային համակարգում կաշտակերությունը, կոռուպցիան և վարկերի տրամադրման գործընթացը դեռևս մնում է չլուծված խնդիր: Երկրորդ դեպքում կառավարությունը դրամական միջոցներ չի ներարկում բանկային համակարգ: Այս դեպքում կոռուպցիան, կաշտակերությունը և վարկերի ստացման համար գոյացող հերթերը ավելի շատ կլինեն: Մակայն այստեղ հարկ է նշել, որ վերոհիշյալ 2 դեպքերում էլ ներդրումների նվազման հիմնական պատճառը տոկոսադրույքի պարտադրաբար իջեցումն է:

Երբ բանկային տոկոսադրույքի ու ազատ շուկայի տոկոսադրույքի միջև տակա է Լական ճնշվածք, բանկից ձեռք բերված նպաստավոր տոկոսադրույքով վարկը կարելի է իրացնել ազատ շուկայում: Ներկայումս Իրանի ազատ շուկայում տոկոսադրույքը տարեկան 36% է, այն դեպքում ելք բանկային տոկոսադրույքը՝ 12%, այսինքն այս դեպքում ազատ շուկայում ,վերավաճառքից կարելի է ստանալ 24% օգուտ (շահույթ): Այս ցուցանիշը բավականին բարձր է բազմաթիվ ներդրումային ու արտադրական նախագծերում կապիտալի եկամտաբերության ցուցանիշից: Այդ պատճառով էլ ներդրողների մեծ մասը նախընտրում է փոխառվածություն տալ ազատ շուկայում, իսկ տոկոսադրույքի պարտադրաբար նվազեցումը ոչ միայն չի նպաստում արտադրության ծավալների աճին, այլ նաև որոշ դեպքերում նվազեցնում է այն:

Ասենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները, որոնցից հիմնականները ներկայացված են ստորև.

1. Ավանդական բանկային համակարգում բանկերը ավանդատուների և վարկառուների միջև հանդես են գալիս որպես միջնորդ՝ առաջարկելով ինչպես ավանդային, այնպես էլ վարկային ծառայություններ: Ժամանակակից բանկային համակարգում բանկերը առաջ են անցել միջնորդի ավանդական պարտականություններից և սկսել են առաջարկել այլ տեսակի ծառայություններ՝ մուտք գործելով ֆինանսական ծառայությունների բնագավառ: Բանկերը,

ապահովագրական ընկերությունների, ֆինանսական և վարկային ինստիտուտների հետ միասին հանդիսանում են ֆինանսական միջնորդներ:

2. Առանձին երկրների բանկային համակարգեր տարբերվում են միմյանցից, քանի որ դրանք ձևավորվել են տարբեր պատմական ժամանակաշրջաններում, տարբեր ազգային առանձնահատկությունների ազդեցության ներքո և գործում են զարգացման տարբեր մակարդակ ունեցող տնտեսական տարածաշրջաններում: Աշխարհի լավագույն տասը բանկերի շարքում կարելի էր հանդիպել Բելգիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներ: Եվրամիությունում երկրներից շատերը ունեն 3-5 հայտնի բանկեր: Որոշ երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Իսպանիան, Իտալիան և Ֆրանսիան, տարածաշրջանային բանկերը ավելի մեծ կարևորություն ունեն: Բացի այդ Եվրոպայում բազմաթիվ վարկային կազմակերպություններ կան, որոնք մասնագիտացած են որոշակի տեսակի վարկերի տրամադրման մեջ: ԵՄ օրենքները թույլատրում են բանկերին տարբեր ֆինանսական ծառայություններ մատուցել, այն դեպքում երբ ԱՄՆ բանկերը հիմնականում արժեթղթերով ծառայություններ, և ոչ թե բազմապիսի ֆինանսական ծառայություններ են մատուցում: ԵՄ-ում բանկերի վերահսկողության կանոնները բավականին խիստ են, ինչն էլ իր հերթին նվազեցնում է դրանց մրցակցային առավելությունները: Մյուս կողմից կանոնների ճշգրիտ կիրառումը և պատշաճ վերահսկողությունը նպաստում է բարձրորակ ծառայություններ մատուցող ֆինանսական կենտրոնների ստեղծմանը, որոնք կարող են միկրո և մակրո մակարդակում հաճախորդներ ներգրավել:

3. Իսլամական շատ երկրների բանկային համակարգերում կիրառվում են Իսլամի սկզբունքները: Այդ երկրներից են Իրանը, Մալայզիան, Պակիստանը և Մաուրիան Արաբիան: Իրանը և Պակիստանը միակ երկրներն են, որոնք ավերջովին ընդունում են այդ համակարգը: Ղուրանը արգելում է ռբանե, այսինքն չի ընդունում տոկոսադրույքի գաղափարը, հետևաբար ցանկացած տոկոսադրույք դիտարկում է որպես ռեբանե: Դրա իմաստն այն է, որ փողը չի կարող ապրանք համարվել և պետք է օգտագործվի միայն արտադրության մեջ: Այդ պատճառով իսլամական բանկային համակարգի եզակի յուրահատկությունն այն է, որ ավանդները և վարկերը չունեն ֆիքսաված տոկոսադրույք: Ֆիքսված տոկոսադրույք վճարելու փոխարեն բանկն իր շահույթն ու կորուստը կիսում է հաճախորդների հետ: Չնայած Իրանի բանկային համակարգում բանկերն իրենց հաճախորդների ընթացիկ հաշիվներում եղած գումարների համար վճարում են տոկոսներ, ֆինանսական տարվա ավարտին դրանց մեծությունը կարող է տատանվել կախված բանկի ծավալած գործունեության ֆինանսական արդյունքներից: Նման բանկային համակարգում բանկը սերտ կապի մեջ է գտնվում իր հաճախորդների հետ: Գործնականում վաշխատական հարաբերություններից ազատ բանկային համակարգի կենտրոնում բանկի հաճախորդների պահանջներն են: Յուրաբանչյուր պայմանագրի համար

մշակվում են առանձին դրույթներ, այնպես, որ առաջին հերթին հաճախորդները ն բանկը պարտադրված չլինեն վճարելու կամ ստանալու տոկոսներ, այլ հաշվի առնվեն պայմանագրի շահութաբերության մակարդակները: Այդ պատճառով իսլամական բանկային համակարգում բանկային գործարքները ներկայացվում են պայմանագրերի տեսքով: Իրանում ժամանակակից բանկային ծառայությունների ներդրումը մոտ 20 տարով է մնում զարգացող երկրներից:

4. Նոր Արևելյան բանկը Իրանում հիմնադրված առաջին բանկային ինստիտուտն էր 1850թ): Այն հիմք հանդիսացավ բանկային գործառնությունների ստեղծման համար: Այն բրիտանական բանկ էր, որի գլխամասը գտնվում էր Լոնդոնում: Մինչև սահմանադրական հեղափոխությունը խոշոր փողային դիրքի կողմից Քաջարի թագավոր Նասեր օղին Շահին առաջարկել էր ստեղծել իրանական ազգային բանկ, սակայն այդ առաջարկը անտեսվել էր: Այնուամենայնիվ սահմանադրական կառավարման համակարգի հաստատման հետ մեկտեղ իրանական ազգային բանկ ստեղծելու գաղափարը դարձավ իրատեսական և 1906թ-ի դեկտեմբերին բանկը հիմնադրվեց: Ազգային բանկի ստեղծման հիմնական նպատակը Իրանում օտարերկրացիների ունեցած քաղաքական ու տնտեսական ազդեցության նվազեցումն էր: 1927թ-ի ապրիլին Իրանի խորհրդարանը վերջնականորեն հաստատեց Մեյլի բանկի հիմնադրման թույլտվության մասին օրենքը:

5. Իրանի մինչհեղափոխական բանկային համակարգում գերիշխում էին արևմտյան մոդելները: Մինչև 1979թ-ը Իրանում գործում էին 36 բանկեր, որոնց մեծ մասը ստեղծվել էին միջազգային կապիտալով: Իսլամական հեղափոխությունից հետո բանկային ավանդների մեծ մասը տեղափոխվեց արտերկիր և բավականին մեծ դժվարություններ առաջացան փոխտու միջոցների հավաքագրման հետ, ինչի հետևանքով բանկերը հայտնվեցին շատ բարդ ու ռիսկային իրավիճակում: Հենց բանկային համակարգի վերջնական ու հիմնովին կործանումից խուսափելու համար բոլոր բանկերն ազգայնացվեցին:

6. 1979թ-ի հունիսին իրանական բանկերն ազգայնացվեցին և Իսլամական բանկային օրենքի ընդունմամբ բանկի գործունեությունը կարգավորող նորմատիվները փոխվեցին: Արդյունքում սահմանափակվեցին ու խստացվեցին բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակը (առևտրային գործարքներում մասնակցությունը, ավանդների ընդունումը, հաճախորդներին ծառայությունների մատուցումը, վարկերի տրամադրումը): զգայնացված բանկերի համար անհրաժեշտություն ստաջացավ մշակել արդյունավետ կառավարման համակարգ, որի միջոցով հնարավոր կլիներ ստեղծել իսլամական բանկային օրենքների և հարմարեցված ծառայությունների, վարկերի տրամադրման գործընթացի միասնական համակարգ, ինչպես նաև միասնական քաղաքականություն կիրառել մյուս կարևոր տնտեսական, ֆինանսական և դրամավարկային ոլորտներում: Այդ ամենի արդյունքում նորաստեղծ ազգային բանկերը խմբավորվեցին 2 խմբերում: Արդյունքում 1980-ականների սկզբներում

36 բանկերը միավորվեցին ընդամենը 9 բանկերում, որոնցից 6-ը անտրային, իսկ 3-ը մասնագիտացված բանկեր:

7. Ներկայումս Իրանի բանկային համակարգում գերիշխում են 7 պետական ինստիտուտներ՝ 4 անտրային բանկեր և 3 մասնագիտացված բանկեր, որոնց բաժին է ընկնում Իրանի բանկային համակարգի 85%-ը: Բացի այդ գոյություն ունեն ևս 17 մասնավոր բանկեր, 8 մասնավոր վարկային կազմակերպություններ, վարկային գործընկերություններ և ազատ գոտիներում գործող օտարերկրյա բանկերի 3 մասնաճյուղեր: Իրանի բանկային համակարգի առաջնահերթ խնդիրներից է դրա մասնավորեցումը և արդիականացումը: Իրանի խոշորագույն բանկերն են Մելլի, Մադերաթ, Թեջարաթ, Սեպահ և Մելլաթ բանկերը

8. Իրանի բանկային համակարգը փորձում է կայուն դիրքեր գրավել համաշխարհային բանկային համակարգում: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տարբեր երկրների բանկային համակարգերում առկա են բոլորովի տարբեր իրավիճակներ, նմանապես՝ ևս յուրաքանչյուր բանկի հաջողության հիմքում ընկած են յուրահատուկ տնտեսական նախադրյալներ: Որոշ դեպքերում բանկի հաջողություն կապված է եղել պետական աջակցության և հովանավորության առկայությունից, մեկ այլ դեպքում աշխարհագրական դիրքի և աշխարհաքաղաքական զարգացումների առանձնահատկություններից: Ասվածը նշանակում է, որ գոյություն չունի միակ դեղատոմս, որի կիրառումը կարելի է երաշխավորված հաջողություն ապահովել: Վերջին տարիներին իրանական բանկերի արդյունավետությունը բնութագրող ֆինանսատնտեսական ցուցանիշների հիմքում ընկած են մի շարք հանգուցային իրադարձություններ, որոնց շարքում հատկապես կարևոր նշանակություն ունեն.

- նախագահական ընտրություններից հետո պետական բանկերի դեկավարների փոփոխությունը,
- 2005-2010թթ-երին բանկային տոկոսադրույքի 18.3%-ից պարտադրաբար մինչև 12% արհեստականորեն իջեցումը,
- դրամավարկային քաղաքականության փոփոխությունները,
- երրորդ զարգացման ծրագրի համաձայն բանկերի ակտիվների վերագնահատման արդյունքում կապիտալի աճը, որի արդյունքում աճեցին ամորտիզացիոն ծախսերը,
- ֆիքսված տոկոսադրույքի պայմաններում մեծ քանակությամբ վարկեր տրամադրել պարտադրանքը, ինչը հանգեցրեց անհուսովի վարկերի ծավալների աճի, տրամադրվող վարկերի ծավալների բանկերի միջոցների գերազանցման և ԿԲ-ից վերցրած օվերդրաֆալի աճի,
- տոկոսային եկամուտների նվազումը, որը սլայմանավորված էր ֆիքսված ցածր տոկոսադրույքով,
- բանկերի մասնաճյուղերի թվի և անձնակազմի թվաքանակի աճը, և այլն:

9. Իրանական և օտարերկրյա բանկերի համեմատությունը հետաքրքիր համամասնություններ է բացահայտում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

Ակտիվների և կապիտալի շահութաբերության ցուցանիշներով 2003-2005թթ և 2008-2010թթ-երին իրավիճակն առավել բարենպաստ էր իրանական բանկերի համար, այնինչ այս ժամանակաշրջանից դուրս իրավիճակն առավել նպաստավոր էր օտարերկրյա բանկերի համար: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2006-2007թթ. Իրանի դրամավարկային քաղաքականությունն էապես տարբերվում էր նախորդ ժամանակաշրջանի դրամավարկային քաղաքականությունից: 2008-2010թթ-երի տարբերությունը բացատրվում է Եվրոպայում ու ԱՄՆ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի ի հայտ գալու հանգամանքով:

10. Իրանական և օտարերկրյա բանկերի զուտ սոկոսային եկամտաբերության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2005թ-ից սկսած օտարերկրյա բանկերի սոկոսային շահույթը ավելի մեծ է եղել, քան իրանական բանկերինը: Դրա հիմնական պատճառն այն է, որ Իրանում սոկոսադրույքը սահմանվում է վերահսկիչ մարմնի կողմից և իրանական բանկերը չեն կարողանում ճկուն սոկոսադրույքային քաղաքականություն վարել: Այնինչ օտարերկրյա բանկերը ամբողջովին ճկուն են ու զգայուն են ցանկացած տնտեսական փոփոխության նկատմամբ:

11. Իրանական և օտարերկրյա բանկերի ակտիվների զուտ սոկոսային եկամտաբերության դինամիկան ցույց է տալիս, որ եթե 2003թ-ին թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա բանկերը ունեցել են ակտիվների զուտ սոկոսային եկամտաբերության նմանատիպ արդյունքներ, ապա հետագա տարիներին դրանց միջև աստիճանաբար առաջացել է ճեղքվածք, քսնի որ Իրանական բանկերն ավելի շատ զուտ սոկոսային եկամուտ են ստացել քան օտարերկրյա բանկերը: Մյուս կողմից օտարերկրյա բանկերում սոկոսադրույքը կախված է տնտեսական ու մրցակցային իրավիճակից, այնինչ Իրանում նման օրենքներ չեն գործում: 2003-2009թթ.:

12. Իրանական և օտարերկրյա բանկերի ակտիվների գործառնական եկամտաբերության դինամիկան ցույց է տալիս, որ մինչև 2007թ-ը թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա բանկերը ունեցել են միևնույն ցուցանիշները: Սակայն 2008թ-ից հետո առաջացել է ճեղքվածք, որը հիմնականում պայմանավորված է իրանական բանկերում սպեկուլյատիվ գործընթացների ակտիվացմամբ և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նկատմամբ իրանական բանկերի ավելի փոքր զգայունությամբ:

13. Իրանական և օտարերկրյա բանկերի վարկերի եկամտաբերության դինամիկան ցույց է տալիս, որ Իրանի բանկերի համախառն վարկերից ստացվող սոկոսային եկամտի ցուցանիշը միշտ գերազանցել է օտարերկրյա բանկերի ցուցանիշը: Դրա պատճառն այն է, որ իրանական բանկային համակարգը հիմնված է ավանդական բանկային համակարգի վրա, որտեղ եկամտի մեծ մասը գոյանում է վարկային ու ավանդային գործառնություններից: Օտարերկրյա բանկերում այլ տնտեսական գործառնություններից կամ ուղիներից ստացվող եկամուտների դերը ավելի մեծ է:

14. Իրանական և օտարերկրյա բանկերի անևուսայի վարկերի մասնաբաժնի դիևամիևան ցույց է տալիս, որ 2004-2010թթ.–երիև իրանական բանկերի անևուսայի վարկերի մասնաբաժնի գերազանցում էր օտարերկրյա բանկերի ցուցանիշը, իևչը պայմանավորված էր Իրանում պարտադրված տոևուսադրույքի աևկայությամբ, իևչպես նաև այլ շուկաներից վարկերի ներգրավմամբ և պաշտոևական ու ազատ շուկայի տոևուսադրույքները միջև տարբերությամբ (24%): Պաշտոևական և ոչ պաշտոևական վարկայիև շուկաներում տոևուսադրույքների տարբերությամբ պայմանավորված վարկատուևները չեն ցանկանում տ վերադարձել պաշտոևական ադրյուրևներից ստացած իրևեց վարկերը, քանի որ հետագայում դրամական միջոցևևրի պահանջարկի դեպքում ստիպված են լիևելու շատ ալևի բարձր տոևուսադրույքներով վարկեր վերցևել ոչ պաշտոևական ադրյուրևներից:

15. Իրանական և օտարերկրյա բանկևրի վարկևր/ավանդևեր հարաբերության դիևամիևան ցույց է տալիս, որ իրանական բանկերի վարկևր/ավանդևեր հարաբերության ցուցանիշը միշտ բարձր է եղել Բազելյան ստանդարտից (70-80%): Դրա պատճառը վարկերի պարտադրաբար տրամադրումև է և պարտադրված տոևուսադրույքը, իևչպես նաև առավել մատչելի վարկեր ձեռք բերելու մարդկանց հակուրմ:

16. Օտարերկրյա բանկերում անձևակազմի ծախսատարության ցուցանիշը գերազանցել է իրանական բանկերի ցուցանիշիև: Դրա հիմևական պատճառև այև է, որ իրանական բանկերը բավականաչալի ճկուև չեն ճգևածամայիև իրավիճակներում: Բացի այդ որոշակի սահմանալիկումևեր ևև մտցում անձևակազմի ծախսերի հաշվևլշումև, այլիևչ օտարերկրյա բանկերում նման կանոև գոյություն չունի և բանկը կարող է իևքևնություն կառավարել իր ծախսևերը, հատկաչաես անձևակազմի ծախսևերը:

17. Վիճակագրական տվյալևները և հետազոտությունևևրը ցույց են տալիս, որ տոևուսադրույքի նվազեցումը բացասական ազդևություն է թողնում բանկայիև ավանդևերի վրա: Կևևտրոևական բանկի հրապարակված վիճակագրության համաձայև 2009թ.-իև 2008թ. համեմատությամբ արձանագրվել է ոչ պետական ավանդևերի 24.1% աճ, այև դևպրոև, էրբ 2010թ.-իև արձանագրվել է 2009թ. նույև ցուցանիշի համեմատությամբ 17% անկում: Նմանաչաես՝ արձանագրվել է նաև երկարաժամկետ ավանդևերի մասնաբաժնի նվազում 27.5 %-ից միևնչև 17%: Նման վիճակագրությունը թույլ է տալիս եզրակացևելու, որ Իրանի շուրջ ստևդծված աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում բանկայիև տոևուսադրույքի հարկադիր իջևցումը հանգևցրել է ներդրումևների համար հասանելի ֆիևնանսական միջոցևևրի կրճատմաև: Իհարկև, տոևուսադրույքի նվազեցումը միակ գործոևը չէ, որ նպաստել է ներդրումևևրի ծավալի նվազմանը, սակայև, անշուշտ, բազմաթիվ գործոևևևրի շարքում կարևորագույևներից մեկև է, որ հանգևցրել է ներդրումևևրի նվազմաև:

18. Հաշվի առևկրով Իրանի ներկայիև սևտևսական իրավիճակը, հատկաչաես բանկայիև համակարգը և տոևուսադրույքի որոշման հարցում

կառավարության միջամտությունը, ինչպես նաև վարկերի տրամադրման պարտադրանքը՝ կարելի է առաջարկել մի շարք միջոցառումներ, որոնք կնվազեցնեն վերոհիշյալ գործոնների ազդեցությունը: Բանկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է որպեսզի.

- բանկային տոկոսադրույքը որոշվի ազատ շուկայական մեխանիզմներով՝ առաջարկի և պահանջարկի հիման վրա,
- բանկային տոկոսադրույքները սահմանվեն ինֆլացիայի մակարդակից բարձր,
- վերացվի բանկերի սեփական միջոցների հաշվին տևտեսության առանձին հատվածների վարկավորման իրավական պարտադրանքը,
- Կառավարությունը ճանաչի Կենտրոնական բանկի անկախությունը, այնպես, որպեսզի վերջինս կարողանա օգտագործել շուկայի կարգավորման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի գործիքներով:

19. Կատարված հետազոտությունների հիման վրա բանկային համակարգի գործառնական արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է համարվում հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Բանկերում շահույթի ավելացման նոր ուղիների մշակում
- Առավել առաջադեմ ռազմավարությունների կիրառում և հաճախորդների հնարավորությունների ավելի լայն կիրառում,
- Բանկային օրենսդրության մշակման ժամանակ բանկերի մասնակցության ապահովում,
- Մրցակցային առավելությունների հիման վրա նոր ծառայությունների մշակում և ներդրում,
- Հաճախորդների սպասարկման բնագավառում նոր տեխնոլոգիաների կիրառում,
- Այլ պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնադրման միջոցով ֆինանսական միջոցների ներգրավում,
- Ոչ բանկային ֆինանսական ծառայությունների ներդրում և մատուցում, ներառյալ գործակալական, ապահովագրական, կենսաթոշակային խնայողության, ակտիվների կառավարման և այլ ծառայություններ,
- Վարկերի և պարտատուների թողարկման միջոցով ֆինանսական միջոցների հավաքագրում և սյլն:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Դարեաթանի Հ.Ջ., Էլեկտրոնային բանկային ծառայությունների ծագումն ու զարգացում: «Միլիթար Գոշ» գլխամեթոդական հանդես հասարակական գիտություններ, #4 (28), 2010, էջ 70-73:

2. Դարեաթանի Հ.Ջ., Միջոցների էլեկտրոնային փոխանցումը RTGS համակարգի միջոցով: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն

զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-4 (8): Եր.: «Անանիա Շիրակացի» համալս. հրատ. 2010, էջ 235-240:

3. Դարեւթանի Հ.Զ., Փողերի լվացման հարցի շուրջ: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-4 (8): Եր.: «Անանիա Շիրակացի» համալս. հրատ. 2010, էջ 240-245:

4. Դարեւթանի Հ.Զ., Իրանի Իսլամական Հանրապետության հիմնական վճարային համակարգերը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-1 (9): Եր.: «Անանիա Շիրակացի» համալս. հրատ. 2011, էջ 162-168:

ХЕСАМ ЧАЛБЕГИ ДАРЕСТАНИ

Проблемы повышения эффективности банковской системы в Исламской Республике Иран

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03. "Финансы, денежное обращение и кредит".

Защита диссертации состоится 10-го октября 2013г., в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г.Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Банковская система является одной из важнейших составляющих экономики любой страны. Банковскую систему можно охарактеризовать как саморегулирующуюся систему в условиях изменения экономической, политической действительности, которая постоянно находится в движении. Современный коммерческий банк – это организация, которая создана в целях привлечения денежных средств и их распределения на условиях возвратности, платности и срочности.

В банковских системах многих исламских стран используются принципы Ислама. К этим странам относятся Иран, Малайзия, Пакистан и Саудовская Аравия. Иран и Пакистан - единственные страны, которые полностью принимают эту систему. Коран запрещает рибанъ, то есть не признает идеи процентной ставки, суть которой заключается в том, что деньги не могут являться товаром и должны быть использованы только в производстве. По этой причине исключительной особенностью исламской банковской системы является то, что вклады и кредиты не имеют фиксированной процентной ставки.

Исламская банковская система таким образом диктует свои правила разработчикам экономической политики. Естественно, многие инструменты и методы, показавшие свою эффективность в традиционных банковских системах, с той же успешностью не могут применяться в исламской, в том числе, иранской банковских системах. Следовательно, важными становятся исследования, направленные на синтез лучшего мирового опыта и исламской банковской системы, что и обуславливает актуальность выбранной темы.

Целью исследования является выявление проблем развития банковской системы и повышения ее эффективности в Исламской Республике

Иран и разработка путей их решения. Для достижения поставленной цели в диссертационной работе поставлены и решены следующие задачи:

- исследовать современные теоретические и практические представления о банках и банковских услугах;
- исследовать особенности сформированных в разных странах банковских систем;
- выявить сходства и различия традиционной и исламской банковских систем;
- исследовать предпосылки формирования и особенности исторического развития банковских отношений в Исламской Республике Иран;
- изучить историю крепнейших банков Ирана и их финансовые показатели;
- изучить историю крупнейших банков, представляющих разные материки мира, и их финансовые показатели;
- провести сравнительный анализ финансового состояния и расчет важнейших показателей, характеризующих эффективность крупных иранских и зарубежных банков, выявив лежащие в их основе определяющие факторы.

Научная новизна и основные результаты диссертационного исследования заключаются в следующем:

- выявлены причины существующих проблем в банковской системе Ирана, среди которых важное место занимают искусственное регулирование банковской процентной ставки, обязательство по предоставлению кредитов и т.д.
- на основе сравнительного анализа показано, что логика развития иранской и зарубежной банковских систем во многих случаях диаметрально противоположна. Если финансово-экономические показатели зарубежных банков в последние годы были обусловлены финансово-экономическим кризисом, то в иранских банках – международными средствами наказания и внутренней макроэкономической политикой.
- показано, что искусственное снижение процентной ставки негативно сказывается на инвестициях. Последнее обусловлено снижением объемов банковских вкладов, возникновением «черного» рынка кредитов и обязательством по предоставлению отдельных кредитов и т.д.
- разработаны предложения по повышению эффективности банковской системы Ирана, среди которых формирование процентных ставок через рыночные механизмы, поддержание реальной процентной ставки на положительном уровне, отмена обязательств по предоставлению кредитов, разработка мероприятий по привлечению финансовых средств и т.д.

The Main Problems of the Banking System Improvement In the Islamic Republic of Iran

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03. "Finance, Cash Flow and Credit".

The defence of the thesis will take place on October 10th, 2013 at 14³⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics, to: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

Banking system is an important component for the any country's economy. The role of banks in the economy is characterized by the fact that they are financial intermediaries, of intermediary function for the financial capital suppliers and consumers. In the modern banking system, banks have gone beyond the traditional intermediary functions and entered the financial services market and provide other types of services.

In many Islamic countries the banking systems use the principles of Islam. These countries are Iran, Malaysia, Pakistan and Saudi Arabia. Iran and Pakistan are the only countries that have fully adopted this system. Koran prohibits "riba," that is, it does not accept the idea of interest rate. The meaning is that the money cannot be considered as a good and should be used only in the production process. Thus, this is the uniqueness of the Islamic banking system that deposits and loans do not have a fixed interest rate.

Thus, the Islamic banking system dictates its own rules to economic policy makers. Fortunately, a lot of tools and methods which have shown their effectiveness in traditional banking systems cannot have the same efficiency in the Islamic system, including the Iranian banking system. So the studies aimed to create the synthesis of the international best practices and Islamic banking system, have become important which justifies the urgency of the selected topic.

The main goal of the research is to identify the issues and design the approaches in order to develop and increase the efficiency of the banking system of the Iran. In order to achieve the main goal of the research the following objectives were identified and met:

- To study modern (theoretical and practical) ideas on banks and banking services;
- To study peculiarities of the banking systems in different countries;

- To identify similarities and differences between traditional and Islamic banking systems;
- To study the prerequisites of the formation and the features of the historical developments of Iran's banking system;
- To study the history and financial indicators of Iran's largest banks;
- To study the history and financial indicators of the world's biggest banks from different continents;
- To calculate and conduct the comparative analysis of the financial condition and the most important efficiency indicators of Iran's biggest banks and the same indicator of the world largest banks by revealing the most important factors;

The main scientific results of the research and the novelty are:

- The cause-roots of the problems, such as the artificial regulation of bank interest rates, providing loans under the mandatory condition in the Iranian banking sector, and etc. were identified.

- The results of comparative analysis have shown that the developments of the Iranian banking system is opposite from the developments of the international banking system. If the financial and economic indicators of foreign banks of recent years were associated with the Global Financial Crisis, the indicators of the Iranian banks, were associated with international sanctions and domestic macroeconomic policy

- It was shown that the artificial decrease of the interest rates negatively affects investments attributed to the decline in deposits, creation of "black" credit market and the obligations to provide separate loans;

- Approaches to increase the efficiency of the banking system of Iran were designed: determining interest rates based on free market mechanisms; keeping the real interest rates above 0; elimination of mandatory loan provision; design of measure to attract financial resources.

H-Z. Daries Tani